ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1

Զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմաններն ուսումնասիրող Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

18.01.2022թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմաններն ուսումնասիրող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. ՀՀ Լոռու մարզպետի 12.01.2022թ. թիվ 22-Ա որոշման հրապարակում /հանձնաժողովի կազմի ներկայացում/:

/Զեկ.՝ Մարզպետի տեղակալ Գոռ Ասրյան/

2. ՀՀ կառավարության 06.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1419-Ն որոշման պահանջներին համապատասխան ՀՀ Լոռու մարզի համայնքներից ստացված գործերի մասին.

ա/ 02.10.2020թ. զոհված զինծառայող Վանիչկա Ռուբիկի Սարգսյանի ընտանիքի բնակապահովման հարցի քննարկումը. շահառու մայրը, կինը, երկու տղաները /ներկայացնող՝ Վանաձորի համայնքապետարան/

բ/ 10.10.2020թ. զոհված զինծառայող Արմեն Սեյրանի Մարտիրոսյանի ընտանիքի բնակապահովման հարցի քննարկումը. շահառու ծնողները, կինը, տղան /ներկայացնող՝ Վանաձորի համայնքապետարան/

գ/ 2020թ. վնասվածք ստացած 2-րդ խմբի հաշմանդամ Հրաչյա Հովհաննեսի Հարությունյանի ընտանիքի բնակապահովման հարցի քննարկումը. շահառու հաշմանդամը, կինը, տղան և աղջիկը /ներկայացնող՝ Վանաձորի համայնքապետարան/

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

3. ՀՀ կառավարության 06.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1419-Ն որոշման պահանջներին համապատասխան ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանում ստացված և մերժված գործերի մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի անդամ Քաջիկ Թադևոսյան/

4. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Նախապատրաստել գրություն ՀՀ պաշտպանության նախարարին՝ դրական եզրակացություն ստացած թվով երեք ընտանիքների բնակարանային գործերը սուրհանդակային ծառայության միջոցով ուղարկելու մասին:

բ/ Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետարանի կայք-էջում տեղադրելու համար:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳՈՌ ԱՍՐՅԱՆ